



ՀՀ Արարատի մարզ գ. Լանջազատ /Զովաշեն/

Հեռ. (Тел.)

« 02 » 04 2013 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՁԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2013 թվականի ապրիլի 2 – ին Լանջազատի գյուղական համայնքում տեղի ունեցավ համային լսում: Նախագահում էր համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանը, քարտուղարում էր գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Մելքոնյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հ. Դանիելյանը, ավագանու անդամներ .

գյուղապետարանի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի աշխատակիցները, համայնքի ընտանեկան լուծույթը, հանրակրթական դպրոցի տնօրենը, ինչպես նաև համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ -- Արարատի մարզի Լանջազատ համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանի հաշվետվությունը 2013 թ. առաջին եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐԶԱՆԱԳՐՎԵՑ, որ

2013թ. առաջին եռամսյակի ընթացքում Լանջազատի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետի և ավագանու անդամների կողմից արձանագրվել է 131 ընդունելություն:

Ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները բննարկվել են համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 175 տեղեկանք, ստացել 45- ից ավել պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք բննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2013թ. առաջին եռամսյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ , մարդկել են ոռոգման ջրատարները, փողոցները: Ամիսը 5 անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտգրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ :

Համայնքի ղեկավարի աջակցությամբ ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել բունաքիմիկատներ, դիզ.վառելիք և սերմեր:

2013թ.առաջին եռամսյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա / հողի հարկ՝ 340.6 հազար դրամ.

բ / գույքահարկ որից.

1.շենք և շինություններ՝ 14.0 հազար դրամ.

2.ավտոմեքենաներ՝ 381.4 հազար դրամ.

գ / տեղական տուրք՝ 20.0 հազար դրամ

դ / ոչ հարկային եկամուտներ՝ 209.6 հազար դրամ

Համայնքում իրականացվել է մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությամբ նշվել է հունվարի 28 – ը՝ ազգային բանակի օրը, մեծ շուքով նշվել է նաև ազգային ծիսական տոներից 2 – ը՝ Տեառնընդառաջը և Ս. Ջատիկը ինչպես նաև կանանց միջազգային օրը:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 600.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Հուղարկավորության նպաստ՝ 20.0 հազար դրամ

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 139.0 հազար դրամ.

Աղքահանձան աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 399.0 հազար դրամ.

Մասնակի բարեկարգվել է համայնքի գլխավոր փողոցը և գերեզմանատներ տանող 2 ճանապարհները.

2013թ 2 – րդ եռամսյակում նախատեսված է կուլտուրայի տան բակի բարեկարգում և ծառատունկ, փողոցների մասնակի բարեկարգում, խմելու և ոռոգման ջրի ցանցերի վերանորոգում և ջրատարերի մաքրում:

ՀԱՍՏԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ